

Տեղեկանք

2019 թ. գիտության ոլորտում ենթակառուցվածքի, նյութատեխնիկական բազայի արդիականացման նպատակով

ՀՀ գիտության կոմիտեի աջակցությամբ ձեռքբերված գիտական սարքի/սարքավորման վերաբերյալ

Սարքի/սարքավորման անվանումը	UV-VIS սպեկտրոմետր LAMBDA 365 /Perkin Elmer/ + Peltier temperature controller and multicell changer
Գիտական կազմակերպություն	Երևանի Պետական Համալսարանի հիմնադրամ
Համաֆինանսավորող կազմակերպություն	Երևանի Պետական Համալսարանի հիմնադրամ
Գիտության կոմիտեից ստացված ֆինանսական աջակցության չափը (հազար դրամ)	16 000
Համաֆինանսավորման չափը (հազար դրամ)	500
Շահագրգիռ կազմակերպություններ	ՔԵՆԴԼ և ՀՀ ԳԱԱ Օրգանական և դեղագործական քիմիայի գիտատեխնոլոգիական կենտրոնի Մոլեկուլի կառուցվածքի ուսումնասիրման կենտրոն (ՄԿՈՒԿ)
Սարքի/սարքավորման կիրառման ոլորտները	Սարքը հնարավորություն է տալիս կատարել կենսապոլիմերների սպեկտրալ հատկությունների ուսումնասիրություն: Մասնավորապես, հՀետազոտելով ԴՆԹ-ի և լիզանդների հետ նրա առաջացրած կոմպլեքսների հալման պրոցեսը կարելի է բացահայտել ԴՆԹ-ի հետ լիզանդի փոխազդեցության առանձնահատկությունները: Սարքի օգնությամբ կարելի է հետազոտել նաև դարձելի կապվող լիզանդների ադսորբցիան ԴՆԹ-ի վրա: Տիրման սպեկտրներից ստացված արդյունքների օգնությամբ հաշվում են ԴՆԹ-լիզանդ կոմպլեքսների ջերմադինամիկական պարամետրերը՝ կապման հաստատունը (K) և տեղերի թիվը (n):
Սարքով/սարքավորումով կատարված/կատարվող աշխատանքները (հետազոտություններ, օգտվող գիտաշխատողների և կազմակերպությունների թիվ, հրապարակումներ և այլ տեղեկատվություն)	Սարքից օգտվելու են ԵՊՀ ֆիզիկայի, կենսաբանության և քիմիայի ֆակուլտետների և շահագրգիռ կազմակերպությունների մոտ 30 գիտաշխատող:


Գիտական կազմակերպության ղեկավար՝

(ստորագրություն)

Գեղամ Գրիգորյան
(անուն, ազգանուն)

ՀՀ գիտության կոմիտեի աջակցությամբ ձեռքբերված սարքավորումների լուսանկարներ

UV-VIS սպեկտրոմետր LAMBDA 365 /Perkin Elmer/ + Peltier temperature controller and multicell changer



Տեղեկանք

2019 թ. գիտության ոլորտում ենթակառուցվածքի, նյութատեխնիկական բազայի արդիականացման նպատակով

ՀՀ գիտության կոմիտեի աջակցությամբ ձեռքբերված գիտական սարքի/սարքավորման վերաբերյալ

Սարքի/սարքավորման անվանումը	Դիֆերենցիալ սկանավորող միկրոկալորիմետր NANO DSC /TA Instruments/
Գիտական կազմակերպություն	Երևանի Պետական Համալսարանի հիմնադրամ, ԵՊՀ
Համաֆինանսավորող կազմակերպություն	Երևանի Պետական Համալսարանի հիմնադրամ, ԵՊՀ
Գիտության կոմիտեից ստացված ֆինանսական աջակցության չափը (հազար դրամ)	44 000
Համաֆինանսավորման չափը (հազար դրամ)	5 500
Շահագրգիռ կազմակերպություններ	ՔԵՆԴԼ և ՀՀ ԳԱԱ Օրգանական և դեղագործական քիմիայի գիտատեխնոլոգիական կենտրոնի Մոլեկուլի կառուցվածքի ուսումնասիրման կենտրոն (ՄԿՈԼԿ)
Սարքի/սարքավորման կիրառման ոլորտները	Սարքի միջոցով ուսումնասիրվելու են կենսապոլիմերները և լիզանդների հետ նրանց առաջացրած կոմպլեքսների կառուցվածքի էներգետիկ (ջերմադինամիկական) բնութագրիչները: Սարքի բարձր զգայունությունը թույլ է տալիս հետազոտություններ կատարել օգտագործելով շատ քիչ քանակությամբ նյութ, որը շատ կարևոր է հատկապես բջիջներից անջատված սպիտակուցների և նուկլեինաթթուների կարճ հատվածների հետ աշխատելիս:
Սարքով/սարքավորումով կատարված/կատարվող աշխատանքները (հետազոտություններ, օգտվող գիտաշխատողների և կազմակերպությունների թիվ, հրապարակումներ և այլ տեղեկատվություն)	Սարքից օգտվելու են ԵՊՀ ֆիզիկայի, կենսաբանության և քիմիայի ֆակուլտետների և շահագրգիռ կազմակերպությունների մոտ 30 գիտաշխատող

Գիտական կազմակերպության ղեկավար՝

(ստորագրություն)

Գեղամ Գրիգորյան
(անուն, ազգանուն)

ՀՀ գիտության կոմիտեի աջակցությամբ ձեռքբերված սարքավորումների լուսանկարներ

Դիֆերենցիալ սկանավորող միկրոկալորիմետր NANO DSC /TA Instruments/



Տեղեկանք

2019 թ. գիտության ոլորտում ենթակառուցվածքի, նյութատեխնիկական բազայի արդիականացման նպատակով
ՀՀ գիտության կոմիտեի աջակցությամբ ձեռքբերված գիտական սարքի/սարքավորման վերաբերյալ

Սարքի/սարքավորման անվանումը	Շարժական լաբորատոր համալիր (գերբարձր հաճախականության)
Գիտական կազմակերպություն	Երևանի պետական համալսարան
Համաֆինանսավորող կազմակերպություն	Երևանի պետական համալսարան
Գիտության կոմիտեից ստացված ֆինանսական աջակցության չափը (հազար դրամ)	66,000.0
Համաֆինանսավորման չափը (հազար դրամ)	6,000.0
Շահագրգիռ կազմակերպություններ	Հայ-Ռուսական համալսարան (ՀՌՀ), ՀՀ ԳԱԱ Ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտ
Սարքի/սարքավորման կիրառման ոլորտները	Կապ և հեռահաղորդակցություն, նյութեր և կոմպոզիտներ, սենսորիկա, կիսահաղորդիչներ և նանոկառուցվածքներ, էլեկտրամագնիսական ալիքների տարածում և փոխազդեցություն միկրոալիքային տիրույթում
Սարքով/սարքավորումով կատարված/կատարվող աշխատանքները (հետազոտություններ, օգտվող գիտաշխատողների և կազմակերպությունների թիվ, հրապարակումներ և այլ տեղեկատվություն)	Լաբորատորիան կահավորվել և անցել է շահագործման 20.06.2020 թ.: Լաբորատորիայում իրականացվում են հետազոտություններ երկու հիմնական ուղղություններով՝ նոր սերնդի կլանիչների ուսումնասիրությունը միկրոալիքային տիրույթում (խումբը բաղկացած է 6 անդամներից, ներառյալ 1 ասպիրանտ, 2 մագիստրանտ) և հեղուկներում մետաղական նանոմասնիկների միկրոալիքային հատկությունների ուսումնասիրությունը (խումբը բաղկացած է 4 անդամներից, ներառյալ 1 ասպիրանտ, 1 մագիստրանտ): Սարքավորումից մասամբ օգտվում են Ռադիոֆիզիկայի ֆակուլտետի այլ գիտաշխատողներ, ինչպես նաև մագիստրատուրայի ուսանողները որոշ լաբորատոր և ավարտական աշխատանքները կատարելու համար:





Գիտական կազմակերպության ղեկավար՝



(ստորագրություն)

Գ. Գ. Գևորգյան
(անուն, ազգանուն)

ՀՀ գիտության կոմիտեի աջակցությամբ ձեռքբերված սարքավորումների լուսանկարներ

Շարժական լաբորատոր համալիր (գերբարձր հաճախականության)





Տեղեկանք

2019 թ. գիտության ոլորտում ենթակառուցվածքի, նյութատեխնիկական բազայի արդիականացման նպատակով
ՀՀ գիտության կոմիտեի աջակցությամբ ձեռքբերված գիտական սարքի/սարքավորման վերաբերյալ

Սարքի/սարքավորման անվանումը	Բարձր արդյունավետ հեղուկային քրոմատոգրաֆի ուլտրամանուշակագույն դետեկտոր
Գիտական կազմակերպություն	Երևանի պետական համալսարան
Համաֆինանսավորող կազմակերպություն	Երևանի պետական համալսարան
Գիտության կոմիտեից ստացված ֆինանսական աջակցության չափը (հազար դրամ)	4 000
Համաֆինանսավորման չափը (հազար դրամ)	69.301
Շահագրգիռ կազմակերպություններ	Եվրասիա Միջազգային Համալսարան, «Նարեկ» գիտահետազոտական ՓԲԸ
Սարքի/սարքավորման կիրառման ոլորտները	Անալիտիկ քիմիա, սննդամթերքի քիմիական անվտանգություն, վիտամինների, միկոտոքսինների, դեղամիջոցների մնացորդային քանակների հայտնաբերում, դեղերի անալիզ
Սարքով/սարքավորումով կատարված/կատարվող աշխատանքները (հետազոտություններ, օգտվող գիտաշխատողների և կազմակերպությունների թիվ, հրապարակումներ և այլ տեղեկատվություն)	<i>Երևանի պետական համալսարան</i> Սարքով աշխատում են 3 կազմակերպություններ (Երևանի պետական համալսարան, Եվրասիա Միջազգային Համալսարան, «Նարեկ» գիտահետազոտական ՓԲԸ) և 1-ական աշխատակից յուրաքանչյուր կազմակերպությունից, սարքը տեղադրված է ԵՊՀ քիմիայի ֆակուլտետում, սննդի անվտանգության լաբորատորիայում: ԲԱՀՔ ՈւՄ դետեկտորը ԵՊՀ-ն ստացել է 2020թ. մարտ ամսին: Covid-19 համավարակով պայմանավորված դետեկտորը հիմնական սարքին միացվել է ապրիլ ամսին, կատարվել է հիմնական սարքի հետ նույնականացում, և ստանդարտ նմուշների քրոմատոգրամների գրանցում: ԵՊՀ-ում սարքի օգնությամբ կատարվում են ուսումնական լաբորատոր պարապմունքներ, ավարտական աշխատանքներ և մագիստրոսական թեզեր, վերջիններիս հիման վրա նախատեսվում է տպագրել գիտական հրապարակումներ: Ձևակերպվում է ուսումնամեթոդական ձեռնարկ:


Եվրասիա Միջազգային Համալսարան

Պայմանավորված COVID-19 համավարակով ԵՄՀ-ն դեռևս հետազոտական աշխատանքներ և փորձարկումներ չի իրականացրել, որոնք ներառում են նաև տվյալ սարքավորումը: 2020-2021թթ ուս. տարում կախված համաճարակային իրավիճակից նախատեսվում է իրականացնել հետազոտական աշխատանքներ, լաբորատոր ուսումնական պարապմունքներ ՈւՄ-դեռեկտորով համակցված ԲԱՀՔ սարքավորման ներգրավմամբ: Դիտարկվում է նաև ԵՊՀ քիմիայի ֆակուլտետի հետ համատեղ գիտական նախագծերի իրականացման հնարավորությունը:

«Նարեկ» գիտահետազոտական ՓԲԸ

Դեռեկտորի հիմնական սարքին միացվելուց հետո փորձարկումներ կամ այլ հետազոտական աշխատանքներ դեռևս չեն իրականացվել՝ COVID-19 համավարակով պայմանավորված: Առաջիկա ուսումնական տարում լաբորատոր/գործնական աշխատանքները կիրականացվեն լաբորատորայում, և պլանավորված ուսումնական լաբորատոր աշխատանքները՝ մասնավորապես սննդամթերքի անվտանգության ցուցանիշների որոշում կիրականացվեն նախատեսված ծավալով՝ նաև դեռեկտորով համակցված ԲԱՀՔ սարքավորման միջոցով:

Գիտական կազմակերպության ղեկավար՝
(ստորագրություն) (անուն, ազգանուն)



--Ռ. Բարխուդարյան--

ՀՀ գիտության կոմիտեի աջակցությամբ ձեռքբերված սարքավորումների լուսանկարներ
Բարձր արդյունավետության հեղուկային քրոմատոգրաֆի ուլտրամանուշակագույն դետեկտոր

